

---

---

## ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԶԱՐՁԱՍԱԳՐՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ ԴԱՅԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ\*

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ գրաբարյան դարձվածքներ, դարձվածաբանական բառապահն, բառապահապահը, բառապահներում չարձանագրված դարձվածքներ, կառուցվածքյին վերլուծություն, ձևաբանական դասավարդում, Ղաղար Փարավեցի, «Պատմովմիւն Հայոց»:

### Նախաբան

Հայերենի դարձվածքների գիտական քննությունը շուրջ մեկ դարի պատմովմիւն ունի: Դարձվածքների վերաբերյալ առաջին տեսական հարցերը տեղ են գտել Արևեն Այտքնյանի, Մանուկ Աբեղյանի աշխատություններում<sup>1</sup>, թեև տեսությունը և առանձին գիտակարգը ձևավորվել են ավելի ուշ XX դ. կեսերին<sup>2</sup>: Պետք է նկատել, սակայն, որ լեզվի զարգացման տարրեր փուլերի դարձվածքները միատեսակ ուշադրության և քննության չեն արժանացել: Լավագույնս ուսումնասիրված է արևելահայերենի դարձվածաբանությունը. դարձվածքները քննված են թե իբրև լեզվական համակարգի ինքնուրույն միավորներ, թե օտար լեզուների դարձվածքների հետ զանազան համեմատություններով, և այս հետազոտությունները շարունակվում են: Իսկ գրաբարի և միջին հայերենի դարձվածքների վերաբերյալ նման բազմատեսակ և համակողմանի ուսումնասիրություններ չեն կատարվել, կարելի է ասել, մինչև XXI դարասկիզբ: Ավելին, անգամ գրաբարի առանձին դարձվածաբանական բառարանը տպագրվել է 2012 թ., այնինչ արդի Հայերենի դարձվածքների ստվարածավալ բառարաններ տպագրվել են 1975 թ.<sup>3</sup> և 2011 թ.<sup>4</sup> չհաշված բազմաթիվ ուսումնական դարձվածաբանական բառարանները:

\* Ներկայացվել է 16. IX. 2020 թ.: ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի պատմովմիւն ամբիոնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, բ. գ. դ. Աննա Արաջյանը (08. IX. 2020 թ.): Ընդունվել է տպագրության 29. I. 2021 թ.:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Այտքնեան. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիէննա, 1866, էջ 317–320, Մ. Աբեղյան. Երկեր, հ. Զ, Երեւան, 1974, էջ 124–126:

<sup>2</sup> Տե՛ս Խ. Բաղիկյան. Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երեւան, 1986, էջ 5:

<sup>3</sup> Ո. Ղազարեան. Գրաբարի դարձուածաբանական բառարան (այսուհետ՝ ԳԴԲ), Երեւան, 2012: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>4</sup> Ա. Սուքիայան, Մ. Գալստյան. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (այսուհետ՝ ՀՀԴԲ), Երեւան, 1975: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>5</sup> Պ. Բեղիբյան. Հայերեն դարձվածքների բնդարձակ բառարան (այսուհետ՝ ՀՀԴԲ), Երեւան, 2011: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

Սա, անշուշտ, չի նշանակում, որ գրաբարի և միջին հայերենի դարձվածքներն ամբողջովին մոռացվել կամ անտեսվել են. մինչև XXI դարասկիզբ գրաբարի դարձվածքների վերաբերյալ ուսումնասիրություններ ևս արվել են, իսկ արդի հայերենի դարձվածքանությանը նվիրված գրականության մեջ հաճախ բավական կարևոր անդրադարձներ և դիտարկումներ կան դրանց վերաբերյալ<sup>6</sup>: Սակայն այն համակարգային ու ամբողջական քննությունը, որը տեսնում էնք արևելահայերենի դարձվածքների համար, գրաբարի ու միջին հայերենի դարձվածքների պարագայում բացակայում է:

XXI դարասկզբից գրաբարի դարձվածքների քննության այս պատկերը փոխվում է. կատարվում են արդեն միայն գրաբարի դարձվածքներին, ընդհանրապես, կամ գրաբարյան այս կամ այն երկի դարձվածքներին, մասնավորապես, վերաբերող ուսումնասիրություններ, որոնցում ներկայացվում և քննվում են ինչպես գրաբարյան բառարաններում արձանագրված, այնպես էլ դեռևս չգրանցված դարձվածքներ: Բառարանային արձանագրում չունեցող դարձվածքներ կան նաև V դարի հայ մատենագրության մեջ՝ այդ թվում և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում: Դրանց արձանագրումը, արտահայտած իմաստի հշտումը, կառուցվածքային վերլուծությունը կարևոր է տեսականորեն պատմական բառագիտության, իսկ գործնականում՝ բառարանագրության համար:

**Զարձանագրված դարձվածքները, դրանց կառուցվածքային քննությունը**

Հետևելով հայ լեզվաբանության մեջ ընդունված ըմբռնմանը, ըստ որի դարձվածքը պատկերավոր հասկացություն արտահայտող, վերահիմաստավորված, վերաբարդրելի կայուն բառակապակցությունն է՝<sup>7</sup> Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի<sup>8</sup> բառապաշարից կարելի է առանձնացնել նշված հատկանիշներին համապատասխան, սակայն բառարաններում<sup>9</sup> չներկայացված 29 կապակցություն: Ընդ որում, եթե դարձվածքը

<sup>6</sup> Տե՛ս Ա. Մարգարյան. Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, Պ. Բեդիրյան. Ժամանակակից հայերենի դարձվածքանություն, Երևան, 1973, Վ. Առաքելյան. Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981 և այլն:

<sup>7</sup> Տե՛ս Խ. Բագիկյան. նշվ. աշխ., էջ 89: Հմմտ. Պ. Բեդիրյան. Ժամանակակից հայերենի դարձվածքանություն, Երևան, 1973, էջ 5, Գ. Զահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 47, Ա. Սուքիասյան. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 296:

<sup>8</sup> Ղազար Փարպեցի. Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ ՂՓ). – Մատենագիրք հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2201–2395: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>9</sup> Բառակապացությունները ստուգվել են գրաբարի հետևյալ բառարաններով՝ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան. Նոր բառգիրք հայկագեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), հ. Ա, Վենետիկ, 1836, հ. Բ, Վենետիկ, 1837, Մ. Աւգերեան, Գ. Ճէլալեան. Առձեռն բառարան հայկագեան լեզուի, Վենետիկ, 1865, Ո. Ղազարեան. Գրաբարի բառարան, հ. Ա–Բ, Երեւան, 2000, Ո. Ղազարեան, Հ. Աւետիսեան. Նորայտ բառեր գրաբարում, Երեւան, 2007, Լ. Հովհաննիսյան. Գրաբարի

բնորոշող այս հատկանիշներից պատկերավորությունը և վերաիմաստավորումն ինքնին հասկանալի են համատեքստից, ապա «վերարտադրելի» և «կայուն» լինելու հատկանիշները գրաբարի դարձվածքների դեպքում հնարավոր է որոշել միայն մատենագրության մեջ գործածության այլ օրինակներ մատնանշելով, քանի որ դրանք, իբրև կայուն կապակցություններ, այլևս գոյություն չունեն մեր լեզվամտածողության մեջ։ Պետք է նկատել, սակայն, որ գործածության այլ օրինակ գտնելը ներկայումս բավական բարդ ու ոչ լիարժեք գործընթաց է՝ հաշվի առնելով գրաբարով ամբողջ մատենագրության ծավալները, միևնույն բառի ոչ բոլոր օրինակների ներկայացվածությունը բառարաններում և ոչ բոլոր երկերի համարբառների գոյությունը։

Ուստի քննվող դարձվածքները բերվում են երկու խմբով՝ Ա. դարձվածքներ, որոնց համար հաջողվել է գտնել այլ երկում կիրառության օրինակ, և Բ., որոնց այլ կիրառություն չի հաջողվել գտնել։ Երկրորդ դեպքում դարձվածք լինելու լրացուցիչ ապացույց է համարվում արդի հայերենում նույն կամ նմանատիպ կառույցի դարձվածք համարվելը և դարձվածբանական բառարաններում արձանագրված լինելը։

Ա.

1. ԱՆԿԱՆԵԼ ՑՈՒՏ – ոտքերն ընկնել, աղաչել. «... այլ պարտ էր փութով եւ երագ երագ անկանել ի յոտադ արտասուաւք եւ աղաչելով ...» (ՂՓ, Էջ 2389, 2289): Գործածված է նաև Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկում<sup>10</sup> «Անկանէր ապաշխարութեամբ յոտս տուրք եպիսկոպոսացն, եւ աղաչէր խաղաղապատելով զի մի՛ մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ» (Եղ, Էջ 595): Արդի հայերենում կա նույնիմաստ «ոտքերը ընկնել» դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 479):

2. ԶԱՆՈՒԻՆ ԳՐԵԼ (գրեալ պահել) ի ԴՊՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՅ – հավերժ հիշատակի արժանացնել. «... զորոց իւրաքանչիւր անուն վարձահատույցն Քրիստոս գրեալ պահէ ի դպրութեան կենաց» (ՂՓ, Էջ 2269): Կա նաև Եղիշեի երկում «... որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին» (Եղ, Էջ 660):

3. ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ ԶԵՐԵՍՍ – հեռանալ, մոռացության մատնել, շեղվել. «... դարձուցեալ զերես իւրեանց ի ճանապարհէն արդարութեան...» (ՂՓ, Էջ 2263, 2345): Կիրառված է Սերեոսի «Պատմութիւն» երկում<sup>11</sup> «Խակ իբրեւ դարձոյց Բարձրեալն զերեսս իւր ի մէնջ եւ նայեցաւ ի մեզ խեթիւ արեգակնն ...» (Սեր, Էջ 515): Արդի հայերենում կա «երես դարձնել (մեկից, մի բանից)» դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 207):

բառարան. Նոր հայկագյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, Ռ. Ղազարեան. Գրաբարի դարձուածարանական բառարան, Լ. Խաչատրեան. Գրաբարի ուսումնական բառարան, Վենետիկ, 2016:

<sup>10</sup> Եղիշէ. Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին (այսուհետ՝ Եղ). – Մատենագիրք հայոց, Հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, Էջ 521–764: Էջերը կնշվեն մեջբերումներին կից։

<sup>11</sup> Սեբէոս. Պատմութիւն (այսուհետ՝ Սեր). – Մատենագիրք հայոց, Հ. Դ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, Էջ 453–565: Էջերը կնշեն մեջբերումներին կից։

4. ԵԼԱՆԵԼ Ի ԲԵՐԱՆՈՅ – ասել. «... զարմացեալ ... ընդ շնորհ աջողութեանն բանիցն, որ ելանէին ի բերանոյ նորա» (ՂՓ, Էջ 2367): Ունի նաև Եղիշեն՝ «Զիք այդր բան աւելի կամ պակաս, որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է» (Եղ, Էջ 753): Արդի հայերենում կա «բերանից դուրս գալ» (ասել, խոսել) դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 124):

5. ԶԱՆՁՆ ՏԱԼ – իրեն նվիրել, տալ մի բանի. «Այլ եւ որ սերտ սիրով եւս զանձն իւր այրն եւ ընտրեաց զլաւն» (ՂՓ, Էջ 2241): Կիրառված է Աստվածաշնչում «... այլ պաշտել եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց»<sup>12</sup>: Այս դարձվածքը կարող է կիրառվել նաև «զանձն տալ ի + հայցականով դրված անուն խոսքի մաս» ձևով, ինչպես՝ «տալ զանձինս ի նահատակութիւնս» (ՂՓ, Էջ 2201), «տալ զանձն ի գործ» (ՂՓ, Էջ 2215), «տալ զանձն յայսպիսի վաստակս» (ՂՓ, Էջ 2206), «տալ զանձն ի մահ» (ՂՓ, Էջ 2277) և այլն:

6. ԶԱՐԵՒ ՏԵՍԱՆԵԼ – ապրել. «... եւ նոքա կեան եւ զարեւ տեսանեն ...» (ՂՓ, Էջ 2283): Օգտագործել է Եղիշեն՝ «Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, եւ կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոց սիրելեաց» (Եղ, Էջ 664): Արդի հայերենում ևս կա «արև տեսնել» (կյանք տեսնել) դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 87):

7. ԶԲԱՆՆ ԱՌՆԵԼ – մեկի խոսքը, ցանկացածը անել. «Բայց եթէ զիս հարցնէք, եւ զբանն իմ առնէք ...» (ՂՓ, Էջ 2314): Եզնիկ Կողբացին ունի՝ «... եւ հուր եւ հողմք եւ մրրիկք որ առնեն զբան նորա»<sup>13</sup>: Արդի հայերենում կա «խոսքը անել» (իր կամ մեկի խոսքը, ցանկացածը կատարել) դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 290):

8. Ի ՄԻԾՍ ԱՍԵԼ – ինքն իրեն մտածել. «... զոր յիմ միտս այսպէս ասէի, թէ լոկ Գրիչոն միայն ...» (ՂՓ, Էջ 2352): Փ. Բուղանդը «Պատմութիւն Հայոց» երկում ունի «ասել ընդ միտս»՝ «... մարդպետն Դղակ, մեծապէս խնդացեալ ասէր ընդ միտս իւր ...»<sup>14</sup>: Արդի հայերենում կա «մտքում ասել» (ինքն իրեն ասել, խորհել) (ՀՀ ԴԲ, Էջ 445):

9. ԼՍԵԼ (հիմ) ԱԿԱՆՁԱՒՔ – անձամբ լսել, իմանալ. «... կամիմք, զի ինքն տեսէց իւրովք աչաւք, եւ ինքն լուիցէ իւրովք ականջաւք» (ՂՓ, Էջ 2355): Եղիշեն ևս գործածել է՝ «... եւ ականջաւք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց» (Եղ, Էջ 761): Արդի հայերենում կա «ականջով լսել» նույնիմաստ դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 11): Ղ. Փարպեցին երկում կիրառել է նաև «այլոյ ականջաւք լսել» կապակցությունը («... եւ կամի տեսանել այլոյ աչաւք եւ լսել այլոյ ականջաւք՝ ծանր է ծառայութիւնն այն») (ՂՓ, Էջ 2331) «ուրիշի միջոցով լսել, տեղեկանալ» իմաստով: Քանի որ գործածության այլ օրինակ չի հաջողվել գտնել, չի կարելի պնդել, որ այն դարձվածք է գուցե Ղ. Փարպեցին ուղղակի համարանությամբ կիրառել է:

<sup>12</sup> Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, Վենէտիկ, 1805, Էջ 677:

<sup>13</sup> Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. – Մատենագիրք հայոց, հ. Ա, Եղար, Էջ 484:

<sup>14</sup> Փաւստոս Բուղանդ. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք հայոց, հ. Ա, Եղար, Էջ 386:

10. ԽԱԽՍԵԼ ԻԻՐՈՎ ԲԵՐԱՆՈՎ – անձամբ ասել. «... եւ ինքն խաւսցի իւրով բերանով ...» (ՂՓ, էջ 2355): Ղեռնդ երեց վարդապետն իր երկում<sup>15</sup> կիրառել է նույնիմաստ «պատմել իւր բերանով»՝ «... յաղթութիւնն իսմայելի զօրացաւ. եւ կործանեցաք զքաղաքս։ Զայս բերանով իւրով, ասի, պատմել զինքենէ» (Ղ, էջ 758): Արդի հայերենում կա «իր բերանով խոսել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 255):

11. ԽՆՈՒԼ ԲԵՐԱՆ – մեկին լոեցնել, թույլ չտալ խոսել. «... սակայն եւ այնպէս խնուկ զբերանս չարախսաւացն ոչ կարէր» (ՂՓ, էջ 2312), «... եւ զմշնամեացն բերանս ի բանսարկութենէ խնուկ ոչ կարէի» (ՂՓ, էջ 2332): Կիրառել է նաև Եղիշեն՝ «Եւ անդէն շիջանէր ի բազմաբոց բորբոքմանէն. քանզի խցաւ բերան չար խրատուացն, որ անդադար յորդորէին զնա ի գործ դառնութեան» (Եղ, էջ 615): Արդի հայերենում կա համարժեք «բերանը փակել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 121):

12. ՅԱԿԱՆՁԱ ՀԱՍԱՆԵԼ – ականջին հասնել, լսել, իմանալ. «Այլ մանաւանդ յորժամ յականջս կանանց եւս եհաս բան արանցն իւրեանց ...» (ՂՓ, էջ 2336, 2349): Կա Ղեռնդ երեցի երկում. «... բարձրացեալ բողոք աշխարհիս հասանէր յականջս իշխանին իսմայելի ...» (Ղ, էջ 757): Արդի հայերենում կա նույնիմաստ «ականջին հասնել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 9):

13. Ո՞ԳԻՏԱՅ – ո՞Վ գիտի, հայտնի չէ, ոչ ոք չգիտի. «Բայց վասն Հոնացն ո՞վ գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ» (ՂՓ, էջ 2314): Գործածված է նաև Աստվածաշնչում՝ «Ո՞ գիտաց զմիտս Տեառն, եւ ո՞ Եղեւ նմա խորհրդակից ...»<sup>16</sup>: Արդի հայերենում կա «ո՞վ գիտի» նույնիմաստ դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 472):

14. ՎԱՂ ԵՒ ԿԱՄ ԱՆԱԳԱՆ – վաղ թե ուշ. «... վաղ եւ կամ անագան զերծանել ի մահուանէ ...» (ՂՓ, էջ 2254): Գործածել է Ագաթանգեղոսը «Պատմութիւն Հայոցում»՝ «... զի եթէ վաղ եթէ անագան, սակայն քակտի հնացեալ մարմինն ...»<sup>17</sup>: Արդի հայերենում կա «վաղ թէ ուշ» (Երբ էլ որ լինի, երբեկցե) դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 543):

15. ՏԵՍԱՆԵԼ (ԻԻՐՈՎՔ) ԱԶԱԻՔ – անձամբ տեսնել. «... կամիմք, զի ինքն տեսցի իւրովք աչաւք, եւ ինքն լուկցէ իւրովք ականջաւք» (ՂՓ, էջ 2355): Այս կապակցությունը կիրառել է նաև Եղիշեն՝ «տեսաք աչաւք մերովք» (Եղ, էջ 634), «ձերոյին աչաւքդ տեսէք» (Եղ, էջ 711), «աչաւք իմովք տեսի» (Եղ, էջ 721) և այլն: Արդի հայերենում կա նույնիմաստ «աչքով տեսնել» (անձամբ տեսնել) դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 57): Ղ. Փարակեցին գործածել է նաև «այլոյ աչաւք տեսանել» (ՂՓ, էջ 2355) կապակցությունը, որի այլ օրինակ չհաջողվեց գտնել: Արդի հայերենում թեև կա «ուրիշ աչք(եր)ով նայել» դարձվածք, բայց տարբեր իմաստով՝ «1. քննադատական, անկողմնակալ, անաչառ վերաբերմունք ունենալ, 2. օտարի նման,

<sup>15</sup> Ղ Եւոնդ Երէց. Պատմաբանութիւն Ղեռնդեայ մեծի վարդապետի հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով աւրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ հայոց ազգիս (այսուհետ՝ Ղ). – Մատենագիրք հայոց, հ. Զ, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 735–854: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>16</sup> Աստվածաշնչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, էջ 513:

<sup>17</sup> Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք հայոց, հ. Բ, Եղարք, էջ 1364:

անտարբեր վերաբերվել» (ՀՀ ԴԲ, էջ 575), այնինչ Ղ. Փարպեցու բնագրում այն հակադրված է «իր աչքով տեսնել» դարձվածքին:

Բ.

1. ԱՅԼՈՅ ԲԵՐԱՆՈՎ ԽԱՒՍԵԼ – ուրիշի միջոցով ասել. «... եւ մի՛ այլոյ աչաւք տեսցէ եւ այլոյ ականջաւք լուիցէ եւ այլովք հանապաղ գիտացէ զմարդ ...» (ՂՓ, էջ 2355): Արդի հայերենում կա նույնիմաստ «(մեկի) բերանով խոսել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 126):

2. ԱՌՆԵԼ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅՑՄ – գործը գլուխ բերել. «... նա իշխէ առնել զլուխ Հայոց գործոյս» (ՂՓ, էջ 2348): Ժամանակակից հայերենում կա համարժեք, բայց որոշակի փոփոխությամբ «գործը գլուխ բերել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 174):

3. ԱՌՆՈՒԻԼ ԶՀԱՄՆ – լավն ու վատը փորձել. «... որ եղեալ առ յապա երեւեցաւ բազմաց, եւ ճաշակեալ առին գհամ եւ զարմացան» (ՂՓ, էջ 2338): Արդի հայերենում կա նույնիմաստ «համը առնել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 341):

4. ԱՐԿԱՆԵԼ ԶԱՆՁՆ ԸՆԴ ՄԵՂՕՔ – մեղքի մեջ գցել. «... ընդէ՞ր առ նախանձ արկանիցեն զանձինս ընդ անապաշնար մեղօք ...» (ՂՓ, էջ 2383): Արդի հայերենում կա «մեղքի մեջ գցել» (ՀՀ ԴԲ, էջ 422):

5. ԵԼԱՆԵԼ Ի ՄՏԱՅ – մտքից ելնել, մոռացվել, հիշողությունից ելնել. «... թուի թէ երկիւղ գործոյն չելանէ ի մտաց» (ՂՓ, էջ 2352): Ընդ որում, թեև դրաբարի դարձվածաբանական բառարանում կա «ի մտաց ելանել» դարձվածք (ԳԴԲ, էջ 129), սակայն այն ունի այլ իմաստ՝ «խելքը կորցնել, ցնորմել»: Արդի հայերենում կա նույնիմաստ «մտքից ելնել, ընկնել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 444):

6. ԶՅՈՅՑՄ ԴՆԵԼ (զոք) – հույսը դնել մեկի վրա, ապավինել. «... բայց զյոյս մեր ոչ ի Հոռոմս եղեալ է եւ ոչ ի Հոռոս ...» (ՂՓ, էջ 2314): Արդի հայերենում կա «հույսը դնել (մեկի, մի բանի վրա)» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 373):

7. ԸՆԴ ԶԵԽԱՄԲ ՈՒՆԵԼ – տրամադրության տակ ունենալ, ձեռքի տակ ունենալ. «... եւ հնագանդեցուցեալ ընդ ձեռամբ իւրեանց ունին» (ՂՓ, էջ 2312): Արդի հայերենում կա «ձեռքի տակ ունենալ» (ՀՀ ԴԲ, էջ 390):

8. ԸՄՏ ԿՇՈՒԵԼՈՅ ԱԿԱՆ – աչքի չափով. «... ոչ գոյ ի նոսա, ըստ կշուոյ ական, աւելի քան զչորս հազար արանց» (ՂՓ, էջ 2345): Արդի հայերենում կա «աչքի չափով» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 52):

9. ԿՈՐՈՒՍԱՆԵՄ Ի ՄԻՋՈՅ – ոչնչացնել. «... առ ոչինչ համարիմ զայնչափ ի ձէնջ աւգուստ եւ զլաստակս, այլ կնաւ եւ որդւովք եւ ազգաւ կորուսանեմ ի միջոյ» (ՂՓ, էջ 2246): Գրաբարի դարձվածաբանական բառարանում կա «բառնալ ի միջոյ» (մեջտեղից վերացնել, ոչնչացնել) դարձվածք (ԳԴԲ, էջ 53), իսկ «կորուսանեմ» և «բառնամ» բայերը հոմանիշներ են<sup>18</sup>: Արդի հայերենում կա դարձվածք է համարվում «մեջտեղից վերացնել» կապակցությունը (ՀՀ ԴԲ, էջ 424):

<sup>18</sup> Տե՛ս Ռ. Ղազարեան. Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2006, էջ 390:

10. ԶԳԵԼ ԶՈՐՈԳԱՅԹ – դավ նյութել մեկի դեմ. «... որ թերեւս ըստ հոգեղին բնութեանն տեսեալ զառ ի ծածուկ ձգեալ զորոգայթ թշնամեացն ...» (ՂՓ, էջ 2388): Արդի հայերենում կա «որոգայթ լարել» (դավ նյութել մեկի դեմ) դարձվածք (ՀՂԴԲ, էջ 486):

11. ՄՏԱՆԵԼ ԸՆԴ ԳԵՏԻՆ – ամաչել, ամոթից գետինը մտնել. «Եւ բայց թէ ապա եւ որ նոցա իսկ նման մարդ էր, որ ձեր խարող հացկատակաց ջոկն էր՝ եւ ոչ կորացեալ մտանէր ընդ գետին ...» (ՂՓ, էջ 2361): Արդի հայերենում կա նույնիմաստ «գետինը մտնել» դարձվածք (ՀՂԴԲ, էջ 135):

12. (Ա.ԶԱՒՔ) ՈՒՂԻՂ ՀԱՅԻԼ – անկողմնակալ լինել, ճիշտ դատել. «... աչառք ուղիղ հայէին ընդ իս» (ՂՓ, էջ 2332), «... ընդ իս չհայէիք ուղիղ» (ՂՓ, էջ 2332): Արդի հայերենում կան «շիտակ նայել» (ՀՂԸԲ, էջ 1001) և «ծուռ աչքով նայել» (ՀՂԴԲ, էջ 307) դարձվածքներ:

13. ՎՃԱՐԵԼ ԶՈԳԻՆ – մահանալ. «Որոյ դառնակոռոչ չարալլուկ հեծմամբ յաւուրս սակաւս վճարեալ զոգին՝ սատակէր անխոստովան ...» (ՂՓ, էջ 2346): Արդի հայերենում կա «Հոգին տալ, ավանդել» դարձվածք (ՀՂԴԲ, էջ 364):

14. ՏԱԼ ՓԱՌՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ – շնորհակալ լինել Աստծուց. «Եւ թագաւորին լուեալ զայս եւ խնդալից եղեալ՝ եստ փառս Աստուծոյ ...» (ՂՓ, էջ 2213, 2285, 2291, 2304, 2319, 2336, 2343, 2356): Արդի հայերենում ևս կա «փառք տալ Աստծուն» դարձվածք (ՀՂԴԲ, էջ 577):

Դ. Փարպեցու երկում կիրառված «յոյս ունիլ»-ը (ՂՓ, էջ 2271), «չնորհէլ թողովթիւն մեղաց»-ը (ՂՓ, էջ 2259), «յեստ տանիլ»-ը (հետ տանել, հետ քաշել) (ՂՓ, էջ 2333) դարձվածք չենք համարում, թեև ՀՂԴԲ-ում իբրև դարձվածք են ներկայացված «հույս ունենալ» (ՀՂԴԲ, էջ 374), «մեղքերի թողովթյուն տալ» (ՀՂԴԲ, էջ 421), «հետ տանել» (ՀՂԴԲ, էջ 357) համարժեք կապակցությունները: Կարծում ենք, այս միավորները վերահիմաստավորված չեն, այլ կայուն կապակցություն կամ հարադրություն են:

Այսպիսով, առանձնացրել ենք զրաբարի բառարաններում չարձանագրված 29 դարձվածք: Դրանց գերակշիռ մասը, ըստ խոսքիմասային պատկանելության, բայական է, 2-ը՝ մակրայական («ըստ կշռելոյ ական», «վաղ եւ կամ անագան»), 1-ը՝ եղանակավորող («ո՞ գիտաց»):

Հստ կառուցվածքային-կաղապարային դասակարգման՝ եղանակավորող դարձվածքը երկրադարձիչ է, պատկանում է զերանուն+բայ կաղապարին: Մակրայական դարձվածքները երկանդամ են՝ բայ+գոյական և ածական+ածական կաղապարներով: Բայական դարձվածքները երկրադարձիչ<sup>19</sup> և բազմաբաղադրիչ են: Երկրադարձիչները ներկայացնում են հետեւյալ պատկերը՝

ա. բայ+գոյական – 10 դարձվածք. «անկանել յոտս», «առնուլ զհամն», «դարձուցանել զերեսս», «ելանել ի բերանոյ», «ելանել ի մտաց», «խնուլ

<sup>19</sup> Երկրադարձիչ ենք համարում 2 լիարժեք անդամից կազմված (այդ թվում՝ նախդիր կամ նախադրություն ունեցող) դարձվածքները:

բերան», «կորուսանել ի միջոյ»<sup>20</sup>, «ձգել զորոգայթ», «մտանել ընդ գետին», «վճարել զոգին»:

բ. գոյական+բայ – 6 դարձվածք. «զանձն տալ», «զարեւ տեսանել», «զբանն առնել», «ընդ ձեռամբ ունել», «ի միտս ասել», «յականջս հասանել»:

Բազմաբաղադրիչներից մեկը քառանդամ է՝ «զանուն գրել ի դպրութիւն կենաց» (գոյական+բայ+գոյական+գոյական), մյուսները՝ եռանդամ հետևյալ կաղապարներով՝

ա. բայ+դերանուն/գոյական<sup>21</sup>+գոյական – 3 դարձվածք. «խաւսել (իւրով) բերանով», «լսել (իւր) ականջաւք», «տեսանել (իւրով) աչաւք»:

բ. բայ+գոյական+գոյական – 3 դարձվածք. «առնել գլուխ գործոյս», «արկանել զանձն ընդ մեղօք», «տալ փառս Աստուծոյ»:

գ. գոյական+բայ+դերանուն/գոյական – 1 դարձվածք. «զյոյս դնել զոք»:

դ. (գոյական)+մակրայ+բայ – 1 դարձվածք. «(աչաւք) ուղիղ հայիլ»:

ե. ածական+գոյական+բայ – 1 դարձվածք. «այլոյ բերանով խոսել»:

### Եզրակացություն

Այսպիսով, Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի բառապաշտի մանրամասն վերլուծությունից և գրաբարյան բառարաններով ստուգումներից հետո կարելի է փաստել, որ երկում կիրառված դարձվածքներից 29-ը ներկայացված չեն բառարաններում: Դրանց դարձվածքը լինելն ապացուցվում է սահմանող հատկանիշներով՝ կառուցվածքային (բառակապակցություններ) և իմաստային (վերաբիմաստավորում), իսկ այլ երկերից բերված կիրառությունների օրինակները ցույց են տալիս այդ բառակապակցությունների կայուն ու պատրաստի լինելու հանգամանքը: Արդի հայերնի դարձվածքների հետ համեմատությունից պարզ է դառնում, որ դիտարկվող 29 դարձվածքից 26-ը ժամանակակից հայերենում ունեն գրեթե նույն կազմությամբ համարեքներ, ինչը ևս այդ կապակցությունները դարձվածք համարելու լրացուցիչ ապացույց է:

Կառուցվածքային վերլուծությունից երկում է, որ այս դարձվածքները համապատասխանում են գրաբարի բառակապակցության օրինաչափություններին, որևէ առանձնահատկություն կամ շեղում չունեն: Դրանք հիմնականում երկբաղադրիչ և եռաբաղադրիչ կառուցյներ են՝ անվանողական բնույթի, որոնց անդամները գտնվում են ստորագասական հարաբերության մեջ: Ձևաբանական տեսակետից միանգամայն օրինաչափ է մեծ մասի (26 դարձվածք) բայական լինելու հանգամանքը, ինչը բնորոշ է ինչպես գրաբարի, այնպես էլ արդի հայերենի դարձվածքարանությանը՝ պայմանավորված հայերենում բայ խոսքի մասի ունեցած առանձնահատուկ դերով ու նշանակությամբ: Հաշվի առնելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ կապակցությունները գրաբարյան լիարժեք դարձվածքներ են

<sup>20</sup> «Ի միջոյ» բառը գոյական է, թեև ինչպես ՆՀԲ-ն էլ նշում է, շփոթվում է մակրայի կամ նախադրության հետ՝ «Ի ՄԻՋՈՅ. բացառ. միշտ է անուն, թէ եւ մկ. կամ նախադր. կարծեացի» (ՆՀԲ, հ. Բ, էջ 259):

<sup>21</sup> Քանի որ որոշ դարձվածքներ ունեն կամընտիր անդամ, կաղապարում ներկայացնում ենք բոլոր հնարավոր խոսքի մասերը, որոնցով կարող է հանդես դալ այդ անդամը: Դարձվածքի կամընտիր (Փակուլտատիվ) անդամների մասին տե՛ս Պ. Բեդիրյան. ժամանակակից հայերենի դարձվածքարանություն, էջ 93–99:

**և կարող են գրանցվել գրաբարի բառապաշարի հարստությունը ներկայացնող բառարաններում:**

Քնար Հարությունյան –Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրադիտության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ձեռագիր մատյաններ, հայերեն մատյանների նկարագրություն-ուսումնակիրություն, V դ. Հայ մատենագրություն, գրաբարի բառապաշար, դարձվածանություն: Համահեղինակ է 1 գրքի և 3 ձեռագրացուցակի, հեղինակ՝ 11 Հոդվածի: knarbanaser@gmail.com

#### REFERENCES

- Abeghyan M. Yerker, h. Z, Yerevan, 1974 (In Armenian).
- Agatangehos. Patmutivn hayots. – Matenagirk hayots, h. B, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Arakelyan V. Aknarkner hayots grakan lezvi patmutyan, Yerevan, 1981 (In Armenian).
- Arakelyan V. Aknarkner hayots grakan lezvi patmutyan, Yerevan, 1981 (In Armenian).
- Astuadsashunch matean Hin ev Nor ktakaranats, Venetik, 1805 (In Armenian).
- Avetikean G. Sivrmeelean Kh., Avgerean M. Nor bargirk haykazean lezui, h. A, Venetik, 1836, h. B, Venetik, 1837 (In Grabar).
- Avgerean M., Jelalean G. Ardzern bararan haykaznean lezui, Venetik, 1865 (In Grabar).
- Aytenean A. Knakan kerakanutivn ashkharabar kam ardi hayeren lezui, Vienna, 1866 (In Armenian).
- Badikyan Kh. Jamanakakits hayereni dardzvadzayin miavornere, Yerevan, 1986 (In Armenian).
- Bediryan P. Hayeren dardzvadzkneri endardzak bararan, Yerevan, 2011 (In Armenian).
- Bediryan P. Jamanakakits hayereni dardzvadzabanutyun, Yerevan, 1973 (In Armenian).
- Eghishe. Vasn Vardanay ev hayots paterazmin. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Eznik Koghbatsi. Eghdz aghandots. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Ghazarean R., Avetisean H. Norayayt barer grabarum, Yerevan, 2007 (In Grabar).
- Ghazarean R. Grabari bararan, h. A-B, Yerevan, 2000 (In Grabar).
- Ghazaryan R. Grabari dardzuadzabanakan bararan, Yerevan, 2012 (In Grabar).
- Ghazarean R. Grabari homanishneri bararan, Antilias-Libanan, 2006 (In Armenian).
- Ghazar Pharpetsi. Patmutivn hayots. – Matenagirk hayots, h. B, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Ghevond Yerec. Patmabanutivn Ghevondeay medsi vardapeti hayots, vor yaghags ereveloyn Mahmeti ev zkni norin, te vorpes ev kam vorov avrinakav tiretsin tiezerats, evs aravel te hayots azgis. – Matenagirk hayots, h. Z, Antilias-Libanan, 2007 (In Grabar).
- Hovhannisean L. Grabari bararan. Nor haykazyan bararanum chvkayvats barer, Yerevan, 2010 (In Grabar).

- Jahukyan G., Aghayan Ed., Arakelyan V., Kosyan V. Hayots lezu, Yerevan, 1980  
(In Armenian).
- Khachatryan L. Grabari usumnakan bararan, Venetik, 2016 (In Armenian).
- Margaryan A. Hayereni haradir bayere, Yerevan, 1966 (In Armenian).
- Pavstos Buzand. Patmutyun hayots. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Sebeos. Patmutivn. – Matenagirk hayots, h. D, E dar, Antilias-Libanan, 2005 (In Grabar).
- Sukiasyan A., Galstyan S. Hayots lezvi dardzvadzabanakan bararan, Yerevan, 1975  
(In Armenian).
- Sukiasyan A. Jamanakakits hayots lezu, Yerevan, 2004 (In Armenian).

**ФРАЗЕОЛОГИЗМЫ В ТРУДЕ «ИСТОРИЯ АРМЕНИИ»  
ЛАЗАРЯ ПАРПЕЦИ, НЕ ПРЕДСТАВЛЕННЫЕ В  
СЛОВАРЯХ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА**

КНАР АРУТИОНЯН

Р е з ю м е

*Ключевые слова:* древнеармянские фразеологизмы, фразеологический словарь, лексика, фразеологизмы, не вошедшие в словари, структурный анализ, морфологическая классификация, Лазарь Парпеци, «История Армении».

Изучение древнеармянских фразеологизмов имеет относительно небольшую историю, и некоторые вопросы еще не решены окончательно. Один из них – вопрос фразеологизмов, не представленных в словарях. Исследование лексики труда «История Армении» историка V века Лазаря Парпеци выявило 29 новых фразеологизмов, не вошедших ни в фразеологический, ни в другие словари древнеармянского языка. Однако их семантический, структурный и морфологический анализ, а также аналоги в современном армянском языке дают основание считать эти единицы полноценными фразеологизмами, частью лексики, которые должны войти в словари. Например: «անկանել յոտս» («падать в ноги»), «դարձուցանել զերես» («повернуться спиной»), «ո՞վ գիտաց» («кто его знает») и т. д.

В основном эти фразеологизмы глагольные: «խնուր բերան» («затыкать рот»), «մտանել ընդ գետին» («провалиться сквозь землю»), «յափանջ հասնել» («доходить до ушей») и т. д.; по структуре двухкомпонентные: «ընդ ձեռամբ ունել» («держать в руках»), «վճարել զոգին» («отдать богу душу») и трехкомпонентные: «զյոյս դնել զոք» («полагаться на кого-либо»), «տեսնել իւրովք աչաւք» («увидеть своими глазами»).

Таким образом, после детального анализа этих 29 единиц, находя для многих из них примеры в других древнеармянских текстах и сравнивая с аналогичными единицами в современном армянском языке, можно утверждать, что они являются фразеологизмами.

*Кнар Арутюнян – младший научный сотрудник отдела кодикологии Матенадарана им. М. Маштоца, аспирантка кафедры истории армянского языка факультета армянской филологии ЕГУ. Научные интересы: рукописи, описание-изучение армянских рукописей, армянская литература V века, лексика грабара, фразеология. Соавтор 1 книги и 3 каталогов рукописей, автор 11 статей. knarbanaser@gmail.com*

## IDIOMS IN THE “HISTORY OF ARMENIA” BY GHAZAR PARPETSİ NOT RECORDED IN THE DICTIONARIES OF OLD ARMENIAN

KNAR HARUTYUNYAN

### Summary

*Key words: Old Armenian (Grabar) idioms, dictionary of idioms, vocabulary, idioms not recorded in the dictionaries, structural analysis, morphological classification, Ghazar Parpetsi, “History of Armenia”.*

The study of Old Armenian (Grabar) idioms has got a comparatively short history, so there are some questions which have not been solved conclusively. One of them is the problem of the idioms not recorded in the dictionaries. The study of the vocabulary of “History of Armenia” by the 5th century historian Ghazar Parphetsi revealed 29 new idioms not included in either the phraseological or other dictionaries of the Old Armenian language. However, the semantic, structural and morphological analysis of these units and their analogues in Modern Armenian give opportunity to consider them as full-fledged idioms, part of the vocabulary that should be included in the dictionaries, such as “անկանել յոտս”, “դարձուցանել զերես”, “ո՞վ գիտաց”, etc.

In general, these idioms are verbal (“խնուլ բերան”, “մտանել ընդ գետին”, “յականջև հասանել”, etc.). According to the structural features, most of them are two-component (“ընդ ձեռամբ ունել”, “վճարել զոգին”) and tree-component units (“զյոյս դնել զոք”, “տեսանել իւրովք աշաւք”).

Thus, after detailed analysis of these 29 units, finding examples for many of them in the various texts of Old Armenian and comparing with similar units of Modern Armenian, it can be argued that they are idioms.

*Knar Harutyunyan – Junior Researcher at the Department of Codicology of Matenadaran named after M. Mashtots, PhD student at the Chair of Armenian language history of the YSU faculty of Armenian philology. Scientific interests: manuscripts, describing and studying of Armenian manuscripts, Armenian literature of the 5th century, the lexicon of Grabar, idioms. Coauthor of 1 book and 3 catalogues of manuscripts, author of 11 articles.*

*knarbanaser@gmail.com*